ԻՄ ԴԱՐԴԸ

—Ինչո՞ւ այդպէս ինձ մոռացար,
Ասաւ աղջիկն ինձ մի օր.
—Ինչո՞ւ այդպէս մեզ մոռացար,
Դանգաստուեցին սար ու ձոր:

—Ո՞հ, մի՛ հարցնէք, հին ընկերներ՝
Ինչո՞ւ էլ չեմ երգում ձեզ,
Շատ եմ փոխուել այն օրից վեր,
Այնպէս մի ցա՜ւ ունեմ ես...

—Ի՞նչ է ցաւը դ, մի հար անենք,
Ասաւ սիրունն անձնուէր.
—Ի՞նչ է ցաւը դ, տո՛ւր մենք տանենք,
Ասին սարեր ու ձորեր:

—Ո՞հ, չէ՛, սիրուն, էլ ոչ մի սէր
Ճար չի անիլ իմ սրտին.
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Զէք դիմանալ էս դարդին:

Ա՜խ, իմ դարդը... բայց ո՞նց անեմ,
Որ իմ դարդը իմանամ,
Սիրտըս խորն է, թէ բաց անեմ,
Սիրտըս խորը, լեզուս փակ...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ